ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. հունվարի 10-ին, N 4 -Ա

ԱՆՈՒՇ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՄՈՒՂՆՈՒ Մ. ԱՇՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշման 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորված հանձնաժողովի նիստի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 145 արձանագրությունը և Ա. Փարեմուզյանի 2025 թվականի հունվարի 10-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ***.

1. 2025 թվականի հունվարի 13-ից Անուշ Կառլենի Փարեմուզյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները ժամանակավորապես դնել «Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Անուշ Փարեմուզյանի վրա՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 1/13/2025 16:35:16 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ